ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2020 թվականի
մայիսի 27-ի N 477-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
03.05.2024 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՎԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
հասարակական կազմակերպության 2023 թ. գործունեության մասին

1. Հասարակական կազմակերպության՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՎԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ»
1.2 ՀՎՀՀ-ն		02522586
1.3 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ԱԲՈՎՅԱՆ 9
1.4 Պետական գրանցման համարը		211.171.03173
1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2004-12-29
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+37491352220
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		evagharibyan@rambler.ru
2 Գործադիր մարմնի ղեկավարի՝		
Անունը	Ազգանունը	Պաշտոնը
ԱՐՄԱՆ	ՍԱՀԱԿՅԱՆ	նախագահ
3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը		
Հայաստանի Հանրապետության հեծանվային մարզաձևի զանգվածային զարգացումը, ազգաբնակչության առողջ ապրելակերպի տարածումն ու ամրապնդումը:Հեծանվային մարզաձևի մարզիչների, մրցավարների, մարզիկների, մասնագետների ու վետերանների սոցիալական իրավունքների պաշտպանությունը: Բարձր կարգի մարզիկների պատրաստումն ու կատարելագործումը: Հեծանվային մարզաձևի նյութատեխնիկական ապահովվածության զարգացումը, զարգացման հեռանկարային ծրագրերի մշակումն ու իրականացումը:		
Չեմպիոնատների և առաջնությունների, միջազգային մրցումների կազմակերպումն ու անցկացումը, սփյուռքի հայկական թիմերի ու մարզիկների մասնակցության ապահովումը: Հեծանվային մարզաձևի մասնագետների որակավորման բարձրացմանն ուղղված սեմինարների և քննարկումների կազմակերպումը, մարզաձևի հայրենական և արտասահմանյան առաջավոր փորձերի ուսումնասիրումն ու ընդհանրացումը:		
Այլ կազմակերպությունների հետ համատեղ՝ մարզիչներին արտասահման գործուղելու վերաբերյալ հարցերի քննարկումը: Իր կանոնադրության սահմաններում մարզիկների, մարզիչների ու մասնագետների խրախուսման իրականացումը: Ձեռնարկատիրական գործունեության իրականացումը		
Միջազգային և օտարերկրյա պետական և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը:Կազմակերպության անդամների ներկայացումը բոլոր պետական մարմիններում, վերջիններիս մասնագիտական գործունեության հետ կապված շահերի պաշտպանությունը:		
4 Հասարակական կազմակերպության՝		
4.1 Անդամների թիվը		156
4.2 Կամավորների թիվը		
5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը		2

6. Իրականացված ծրագրեր՝

Հ/Հ	6.1 Ծրագրի անվանումը	6.2 Վայրը	6.3 Նպատակը	6.4 Կարգավիճակը

Digitally signed by GHARIBYAN YEVA 6009760127
Date: 2024.05.10 15:50:14 AMST

7. Հանրային իրազեկման միջոցառումներ՝

Հ/Հ	7.1 Ծրագրի անվանումը	7.2 Վայրը	7.3 Կարգավիճակը	7.4 Նպատակը	7.5 Հիմնական արդյունքները
1	ՀՀ առաջնություն՝հեծանվահրապարակ	ՀՀ ք.Երևան	Ավարտված	ՀՀ առջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում

2	Ուսումնամարզական հավաք	Ծաղկաձոր	Ավարտված	ՀՀ առջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
3	ՀՀ առաջնություն՝խաճուղի	Երևան-Արմավիր	Ավարտված	ՀՀ առջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
4	Ուսումնամարզական հավաք	Լեհաստան	Ավարտված	ՀՀ առջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի
5	Եվրոպայի երիտասարդների և մինչև 23 տարեկանների առաջնություն	Պորտուգալիա,Անադիա	Ավարտված	Միջազգային մրցաշարերին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	Վարկանիշային միավորների բարելավում
6	Երիտասարդների աշխարհի առաջնություն	Կոլումբիա, Կալի	Ավարտված	Միջազգային մրցաշարերին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	Վարկանիշային միավորների բարելավում
7	Ուսումնամարզական հավաք	Ծաղկաձոր	Ավարտված	ՀՀ առջնություններին մարզիկների նախապատրաստում և մասնակցություն	ՀՀ առաջնությունների մասնակիցների թվի աճ,մասնակցող մարզերի, քաղաքների,մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում
8	Ֆրանկոֆոնիայի մարզամշակութային խաղեր	Կոնգո, Կինշասա	Ավարտված	Եվրոպական հեծանվային միջազգային միության անդամակցում	Միջազգային մրցաշարերին մասնակցություն
9	Մեծ նվաճումների սպորտ՝ վիտամինիզացիա	Երևան	Ավարտված	Մարզիկների ֆունկցիոնալ վիճակի արդյունավետության բարձրացում	Աջակցություն մարզիկների սպորտային գործունության,մրցակցայ ին արդյունավետության բարձրացմանը

8. Տարեկան մուտքեր՝

8.1 Դրամական միջոցները	27,127,147
8.2 Գույքը	
Ընդամենը	27,127,147

9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ

Հ/Հ	9.1 Դրամական միջոցները	9.3 Ստացման աղբյուրները
1	26,251,400	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հ/Հ	9.2 Գույքը	
1		
Ընդամենը	26,251,400	

10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝

10.1 Դրամական միջոցները	26,351,209
10.2 Գույքը	

Հ/Հ	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		26,351,209

11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝

11.1 Դրամական միջոցները	25,475,462
11.2 Գույքը	

Հ/Հ	11.2.1 Տեսակը	11.2.2 Արժեքը
1		
Ընդամենը		25,475,462

12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝

Հ/Հ	12.1 Տեսակը	12.2 Ստացված շահույթը	12.3 Շահույթի օգտագործումը
1	տոկոսի կապիտալացում բանկային հաշվին	18,747	բանկային ծախս
Ընդամենը		18,747	

Նշումներ

2023թ-ին հանրային միջոցների հաշվին մուտքերը կազմել են 26 251 400 ՀՀ դրամ, որից օգտագործվել է 25 475 462 ՀՀ դրամը, իսկ 775 938 դրամի չափով չօգտագործված մնացորդը ետ է վերադարձվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ _____4_____ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար _____

ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրություն, անունը, ազգանուն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵԾԱՆՎԱՅԻՆ ՄԱՐԶԱԾԵՎԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

ԿԱՐԾԻՔ

Մենք աուդիտի ենք ենթարկել «Հայաստանի հեծանվային մարզաձևի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀԿ)՝ 2023թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները:

Մեր կարծիքով, «Հայաստանի հեծանվային մարզաձևի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության կից ներկայացված հատուկ նշանակության ֆինանսական հաշվետվությունը, որը ներառում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հաշվետվության 7-րդ, 9-րդ և 11-րդ դաշտերում լրացված տվյալները բոլոր էական առումներով ճշմարիտ է ներկայացնում 2023 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա մուտքերի և ստացման աղբյուրների, ինչպես նաև օգտագործված միջոցների պատկերը՝ «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք ՀԿ-ից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հասարակական կազմակերպության ղեկավարությունը պատասխանատու է հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը, որը զերծ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումից:

Հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվությունը պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել ՀԿ-ն կամ դադարեցնել դրա գործունեությունը, կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվության օգտագործողների՝ դրա հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ ՀԿ-ի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել ՀԿ-ի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ հասարակական կազմակերպությունների գործունեության հաշվետվության ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, և թե արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունը ներկայացնում է դրա հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 21.05.2024թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Տնօրեն՝ Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր Գայանե Թովմասյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00419022

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 12.07.2024 14:49